

ձգէ աղեաց մէջ, անկէց ալ մորթին ու ուղեղին կը զարնէ : (Ժ)է որ առջի բերան մէկէն ուղեղին զարնէ ան տաքութիւնը, հիւանդը շուտով կը հանդարտի . նոյնպէս թէ որ ներսի բորբոքումն ալ սաստիկ ըլլայ, ու դուրս չզարնէ, և կամթէ որ նորէն ներս զարնէ : (Ճ)անտախտին սաստիկ բորբոքումն ըլլալը անկէց ալ յայտնի է որ շատ հիւանդները իրենց բնութեանը ուղածն ընելով՝ առողջութիւննին գտան, այսինքն ոմաննք պազ ջրի մէջ նետուելով, ուրիշները մերկ մերկ խոնաւ ու պաղօդի մէջ կենալով :

ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՃԱՐՏՅՐՈՒԹԻՒՆ

( )Ճուն մէտաղաց :

Պլէնչաղօծուն : — Ոտոց մէյմը այս զիւտը գտնելէն ետեւ ամէն տեսակ մետաղով ալ սկսաւ օծել, ինչպէս են պըղինձ, զինկ, կապար, և այն :

Վայս արուեստով թէ որ նաւերուն տակը գամուած բարակ երկըթէ տախտակները պղընձազօծուելու ըլլան, ծախքին գրեթէ ամենելին տարբերութիւն չեն ըներ, և առաջնէն աւելի կը զիմանան :

Կոյնափէս որ և իցէ երկաթ պղընձազօծուելով պղընձի ամէն յատկութիւնները կ'առնու, գոյնը, մաքրութիւնը, օդէն չայլայիլը . իսկ ներքին արժեքը նայելու ըլլաս դարձեալ երկաթի զինէ :

Պղընձազօծելու համար ալքալէան՝ կապուտակներու<sup>2</sup> մէջ լուծուած պղընձի կապուտակը՝ կը գործածուի . բայց գործողութեան ատեն պղընձի մասունքը աւելի գժուար կը նստի պղընձազօծուելու մետաղին վրայ քան թէ ոսկին ու արծաթը :

Ինչպէս ըսինք, պղընձազօծուած երկաթը պղընձի արտաքին յատկութիւնն

ները կ'առնու, ուստի ասկէ ետեւ բոլոր կղպամկըները, բանալիքները, ծինիները, երկաթէ վանդակները, խոհանոցի գործիքները, և այն և այն, այս կերպով մաքուր կրնանք պղընձազօծել :

Լապարազօծուն : — Ջոդասի մէջ լուծուած կապարի ոքսիտին՝ վրայ փիլայի զօրութեամբ ներգործելով՝ որ և իցէ երկաթ, երկաթ տախտակ, և ընդհանրապէս ամէն տեսակ մետաղ՝ կրնանք կապարազօծել :

Վագագազօծուն : — Վայս նոր արուեստովս պղինձը, լուծը, արոյրը, երկաթը ու նաև որ և իցէ ծուլածոյ բաները առանց տաքցընելու շատ դիւրաւ ու շուտով կրնան անագազօծուիլ :

Քոպալդզօծուն, կիւլազօծուն : — Քոպալդը, որ գունով աւելի փլազինի կը նմանի, պղընձէ շինուած երաժշտական գործիքները օծելու կու գայ . և անոնց գեղեցիկ մետաղական վեռնիչ մը կու տայ հաստատուն և աժան : Խակնիքէլով կղպամկըներն ու ծիու զարդերը կրնան օծուիլ :

Օխնազօծուն : — Ոտոցին փորձերուն մէջ ամենէն աւելի մտազրութեան արժանին մետաղներու վրայ, մասնաւորապէս երկաթին զինկ տալն է :

Երկաթը զինկով օծուելով ոքսիտի կապեր, բայց ընդհանրապէս զինկազօծած երկաթէ անօթներու մէջ տաք ջուր գնել ըլլար, վասն զի այս երկու մետաղներուն իրարու հետ հազարգուելով առաջ եկած կալվանեան զօրութիւնը շուտով զինքը ոքսիտ կը դարձընէ ու երկաթն ալ կ'ուտէ :

Հալած զինկի մէջ խոթած երկաթը այս անտեղութիւններս ունի որ զինկն ու երկաթը զիրար աղէկ չեն բռներ ու երկաթը զիրարթէկ կ'ըլլայ : Վայս համար երկաթէ բարակ թելերը այս կերպով աղէկ չէ օծելը, վասն զի զիրարթէկ ու տձեւ կ'ըլլան . նմանապէս երկաթէ ուրիշ որ և իցէ զարդարանքի բաներն ալ այս կերպով օծուելով ձևերնին կը կորսընցընեն ու դիւրարթէկ կ'ըլլան :

1. Տես Երես 346 :

2. Գլ. Cyanures alcalins.

3. Գլ. Cyanure de cuivre.

Խակ Առուսցի հնարքով այս ամէն անտեղութիւններս կը վերցուին, և քիչ ստակով փիլայի զօրութեամբ երկաթն ալ, պողպատն ալ, թափծու բաներն ալ զինկի լուծութեան մէջ խոթելով շատ գեղեցիկ կը զինկազօծին . միայն թէ բարակ օծելու է, որպէս զի ձևերնին ու վրայի բանուածքնին չի կորսընցընեն . և այս կերպով կրնան զինկազօծուիլ երկաթէ բարակ թելերը որ շատ բանի կը գործածուին և առանց ժանգոտելու երկար ատեն կրնան դիմանալ : Կմանապէս կախաղանաւոր կամուրջներուն երկաթէ չուանները, շանթարգելի հաղորդիչները, մաղ ու ապահովութեան լապտեր շինելու ցանցերն ալ այս կերպով զինկազօծուած թելերէ կրնան շինուիլ :

Ինչպէս ինչուան հիմայ տեսանք, այս ամէն գործողութիւններս կատարուղը մէկ փիլայ մըն է, որ առաջները միայն հետաքրքրութեան բան մըն էր, իսկ հիմայ ամենէն օգտակար գործիքներէն մէկը սէպուած է :

### ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

#### ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մարդուս լանական էլեմաններու դահ ունէ, ցած յագիռ-թիւնները :

ՀԵՒՍՒՍԱՅԻՆ Վմերիկոյ Խճագուացի և Հուրոն վայրենի ժողովուրդները՝ որ Վանատայի ներակարը կը բնակին, բարքարոս սովորութիւն մը ունին որ զմարդ կը սարսափեցընէ . իրենց որսորդութեան ատեն կամ թէ զինուորական ասպատակութեանց ժամանակ երբոր կը տեսնեն որ ծնողքնին կամ ազգականնին տկար է, չի կրնար ետևներնէն գաղ կը զարնեն կը սպաննեն, վախնալով որ ըրլայ թէ անօթութենէ մեռնին կամ թէ իրենց թշնամեաց խարուկին վրայ խորովին : Կարծէն թէ որ

դիական սիրոյ նշան է ըրածնին, հնազանդելով իրենց ծնողացը հրամանին որ իրենցմէ մահ կը խնդրեն իբրև մեծ շնորհք մը . և ծնողասէր որդիքը անոնց աւելի պատուաւոր թաղումն չեն կրնար ընել՝ եթէ ոչ ուտելով զանոնք : Վաժողովուրդները երկայնահասակ են, ձիթագոյն, բազմակին, անգութ և միաբան ընկերութեամբ կ'ապրին :

Ֆյորիտիոյ, Վիսիսիբիի և հիւսիսային Վմերիկոյ ցամաքին հարաւային ուրիշ տեղեաց բնակիչները չափաւորապէս բարեկազմն են, և Վանատայի ըլնակիչներէն աւելի թխագոյն . մորթերնին ձիթագոյն կարմրի կը զարնէ, որուն պատճառը գլխաւորապէս ուստած ըսուած կարմրագոյն ներկ քսուելէն է : Վրեթէ բոլորովին մերկ կը քալեն, կտրիչ բայց կատաղի են, պատերազմի մէջ բռնած գերինին արևուն կը զոհեն, և վերջը կը նստին կ'ուտեն :

Լաշէները, որ են Ուիզիանայի վայրենիներն՝ մեծղի ու մարմնեղ են, քրթերնին չափէ գուրս երկայն, կզակնին կամարաձև : Լյրբոր իրենց մէջէն ազնուական տիկին մը մեռնի, զորն որ արեգական ցեղէն կը կարծեն, տասուերկու պղտի տղաք ու տամնըզորս ալ չափահաս տղաք կը խղղէն և անոր հետ կը թաղէն . ասոնց գերեզմանին մէջ խոհանոցի գործիքներ, զէնքեր և զարգարանքի ամէն հարկաւոր բաները կը զնեն :

Ուիզիանիան շատ թաց ու ձախճախութեալ են մահաբեր, ընդհատ և թուլացուցիչ տենդերը, և չեն դադրիր մինչեւ որ նոյեմերի մէջ հիւսիսային քամիները վշել մի սկսին : Տեսակ մըն ալ հիւանդութիւն ունին՝ որ սաստիկ ջղերնին կը գելու, որով բովանդակ մարմիննին կոչղի պէս կարկամեալ ու անշարժ կը մնայ, մանաւանդ նորածին տղայք շատ ենթակայ են այս հիւանդութեանս . նոյնպէս ամէն տեսակ ՃՃիներէ առաջ եկած հիւանդութիւններն ալ, մանա-